



արամադրի չեն այս մեծութեան հետ զուգընթաց նրա մէջ դրամատիքական մի խոշոր տաղանդ ճանաչելու Յիբրաւի, նրա բանաստեղծական ամբողջ խառնուածքը աւելի շատ լիբրալական է, քան թէ դրամատիքական. այնպէս որ նրան համարձակ կարելի է լիբրալական դրամատուրգ անուանելու Առանց կանգ առնելու այս սեփականութեանը ընդհանուր դրամատիքական արժանիքի վրա, որ, մեր կարծիքով, ոչ մի դէպքում աչքի ընկնող խոշորութեան չէ կարող հասնել—կարելի էր ենթադրուի շեշտել միայն այն կէտը, որ այս առանձնաշատութեամբ ընտրուած են մասնաւորապէս բանաստեղծութիւնը, բայց էութեան, «եսի» (այն մտքով հասկացած) բանաստեղծութիւն է—այն «եսի», որ ինքնիշխան եւ անկախանդ կերպով ստեղծու է իր թեւերը նաեւ բանաստեղծական այն դաշտի վրա, որ քնարերգականին անհամեմատ աւելի օրելի էր պէտք է լինի—դրամատ

Վ. Հիւզօն մինչեւ 25 տարեկան հասակը ուժեղ կերպով հակված էր դէպի կլասիքական դրամատիքին. գրական այս աւանդապահութեան հետ միասին նա իր ընդհանուր պայտարհանաչքով նոյնպէս աւանդապահ էր—արքայադէր էր եւ Ներմանուդ կաթօլիկ Բայց երիտասարդ, վառվառ բանաստեղծը չէր կարող միշտ միօրինակ մնալ, մասնաւորապէս դրամատիքի միջոցով նոր ապագայութիւնները, նոր ոգու եւ թարմ, ետեւ հասունութեան արտաքին նա ցոյց տուց էր նորը զգայնութիւն, այնպէս որ աշխարհայայտագրի, զգացմունքների եւ գրական նոր իդէալների խնդրումը շատ ուժեղ եւ բազմակերպ էր կատարել նրա մէջ. առաջվայ արքայադէր հեղինակը դառնում էր ազատամիտ, ապագայում նոյն իսկ դէմօկրատ. իսկ կլասիքական արտեւորի երկրպագուն կամ մասնակց հակվում էր դէպի բանաստեղծականութիւնը. Հիւզօնի բանաստեղծական զեղումների սկզբնական եւ ամենափայլուն արտայայտութիւններից մէկն է նրա նշանաւոր «Les Orientales», որին շատով յարգուց նրա առաջին դրամատի «Երօմիլը» Այս դրաման, թէեւ զանազան պատճառներով չէր ներկայացվեց, բայց նրան կցված էր մի յառաջան, որ ներկայացվեց զուգէ աւելի կարեւոր նշանակութիւն ունեցաւ Այս յառաջանում Հիւզօն մի բացարձակ կորէ էր յայտարարում կլասիքական արտեւորի դէմ: Այդ ժամանակներից սկսած նա յայտնապէս դառնում է Ֆրանսիական բանաստեղծների պարագլուխը Այնուհետեւ նա գրեց իր յայտնի դրաման «Էրնանի», որի առաջին ներկայացումը տեղի ունեցաւ 1830 թուին. ներկայացման ժամանակ «Théâtre français»-ում տեղից գրական երկու հակառակ ուղղութիւնների մի չը տեսնուած պայքար. հարիւրաւոր բանաստեղծի պատմական տարօրինակ տարազներով զարդարված՝ բնել էին ներքնայարկի մեծ մասը, որոնք չը նայելով հակառակորդների բուն ընդդիմադրութեան անօրինակ ցոյցերով եւ որոտընդոտ ծափա-

հարութիւններով ապահովեցին «Էրնանի» յաջողութիւնը: Այս դրամայով Հիւզօն Արիստոտելեան «միութիւնների» հետ խզեց իր կապը. գործողութեան յաջորդականութիւնը պահպանեց իհարկէ, բայց չը հետեւեց տեղի եւ ժամանակի միութեանը. սրանով կլասիկական հեղինակութիւնը արդէն նրա համար փշրված էր. նա ձգտում էր դրամայի մէջ նոյնպէս տեսնել հեղինակի կամքը, ցանկութիւնը, ինքնիշխանութիւնը:

Դրամայի նիւթը պատմական բովանդակութիւն ունի, վերաբերում է 18-րդ դարի սկզբներին, այն բովանդակվեց, ետեւ ժամանակներին, երբ կաթօլիկութիւնը իշխում էր ամենազոր կերպով, բայց եւ անկասկա, բարոյական քայքայման գագաթնակէտին էր հասել, երբ պապերի հզոր պաշտպանի՝ Սպանիայի տիրապետութեան ոսկեդարը դեռ չէր անցել, երբ միւս կողմից Վիտտէնբերգի ահարկու հերոսը՝ Մարտին Լութեր՝ պապի այս ամենաօրհնած եւ վտանգաւոր թշնամին, իր անվեր եւրոպայականութիւնը սկիզբն էր դրել իր մանկութեան եւ պատանեկութեան մի մասն Սպանիայում անցկացնելով Հիւզօն արհաւիրքի եւ երեւակայութեան, կրքերի եւ արկածների այս կրակոտ, տարապայման երկրից բերել էր իր հետ շատ վառ յիշողութիւններ «Էրնանի» անա կրում է մասամբ այս յիշողութիւնների կնիքը: Մա բանաստեղծական մի անզուսպ ընդդիմութիւն սիրոյ, միւս կողմից միջնադարեան ապստամբական ոգու, վեհանձնութեան մի գրամա է, որ բարդվում է մի քանի երկրորդական անցքերով:

Սպանական հին ազնուական մի տան պատկանող դուստր Սոլիվայի վրա Հիւզօն արհաւիրքից եւ առաջին երեք անձնաւորութիւնների—Էրնանի, Սպանիայի եւ Ֆրանսիայի թագաւոր դոն Կարլոսը եւ, ուշադրութեան արժանի է, իր հօրեղբայր, ծերունի դոն զը Սոլիվան. բայց Սոլի սիրտը պատկանում է Էրնանիին՝ Կատալոնիայի լեռներում մեծացած երիտասարդ «աւազակին», որ նոյնպէս սպանական հին ազնուական ծագումից է—Արագոնիայի դուքսը: Սիրահար զոյգի տեսակցութեան րօպններից մէկում երեւան էր զալիս դոն Կարլոսը: Խանդոտ Էրնանին եւ իր ծպտված հակառակորդը մենամարտի են ընկնում, բայց դեռ մի կըլի չը հասած վրա է հասնում դոն զը Սոլիվան, որի արտոյունն էր տեղի ունենում անցքը: Յայտնվում է ծպտվածի դոն Կարլոս ինչու: Թագաւորը, Էրնանիի յետ ունեցած մի նոր ընդհարումից յետոյ, զիջագին է նշանակում իր հակառակորդին սպանողին: Էրնանին, իր թշնամիներից ազատված, հասնում է իր սիրուհու մօտ, որ արդէն ընդ կերպով նշանակել էր դոն Սոլիվայի հետ Սոլի եւ Էրնանիի սիրաբանութիւնների ժամանակ վրա է հասնում դոն զը Սոլիվան. չը նայելով իր կատաղի խանդոտութեան եւ հոգեկան բուռն յուզմունքին՝ նա Էրնանիից անկարող է վրէժխնդրի լինել, որովհետեւ նա իր հիւրն է: Այնուհետեւ զալիս է Էրնանիին նշանող թագաւորը եւ պահանջում է դուքսից կամ Էրնանիի կամ թէ սեփական գրուար մի պայման՝ Դոն Կարլոսը Արագոնի ժողովում գերմանութիւնը նրան ստանալու էր չնորոգում եւ, որ զիջաւորն է, թող էր տալիս Դոն Կարլոսը հետ աւժանանալ: Ըստ երեւոյթի, ամեն ինչ խաղաղ պէտք է վերջանար, բայց հարսանիքի առաջին օրը արդէն վրա է հասնում զորագրութիւնը: Էրնանին, դուքսին հասցրած իր վիրաւորանքի փոխարէն, խոտապել էր առլ նրան իր կեանքը՝ թագաւորից վրէժը լուծելուց յետոյ, նա երդվում է իր հօր անունով եւ, իբրեւ նրան, իր եղբորը, փողը յանձնում է Դոն զը Սոլիվային եւ պայմանաւորվում է նրա ձայնը լսելու պարտաւոր լինել մահման: Եւ ահա ամուսնութեան առաջին օրվայ երջանիկ րօպններից մէկին Էրնանիի սկանչին է հասնում փողի ձայնը, որ երեք անգամ կրկնվում է. այնուհետեւ երեւում է ծերունի դուքսը. նա անողոք է, զոնձ Սոլի արտառուքները, կովտարի պազատանքը անկարող են նրան մեղքացնել նա մահ է պահանջում եւ առաջարկում է Էրնանիին թոյն կամ դաշոյն Բայց թոյնը առաջ զբաւուր ըստինն է լինում՝ յետոյ Էրնանիի. իսկ դաշոյնը խոտապրտ ծերունին իր համար է պահում:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Թիֆլիսի քաղաքապետի պաշտօնակատար Շեքոտայով, չարաթ, սեպտեմբերի 20-ին, ըստապաւ Բաթումից՝ նորին մեծութիւն յունաց թագուհի Օլգա Կոնստանտինովնայից հետեւեալ հեռագիրը. «Տանում եմ ինձ հետ ամենապայման յիշատակներ այն օրերի մասին, որ մենք անցկացրեց հիւրանքի Թիֆլիսում: Խնդրում եմ ձեզ հաղորդել քաղաքին իմ սրբազին կրաստադիտութիւնը: Օլգա»:

Կիրակի, սեպտեմբերի 30-ին, տեղի ունեցաւ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան յիսնամեայ յօ ընկերանի նուրի-րած հասնումը Եւրոպայի նախագահում էր Սուլթան-Կիրմ-Գիրէյ: Ներկայ էին ընկերութեան անդամները, խորհրդի ամբողջ կազմը,

դանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներ՝ երկրագործութեան միւսիսորի լիազօր Ե. Մեդվեդեւի, կառավարչապետի խորհրդի անդամ Պրիբիլ: ռուսական շրջանի հոգաբարձու Չապալախի, Կայոց Կաթողիկոսի կողմից ուղարկված ներկայացուցիչ Մեարոպ վարդապետ Տէր-Մովսէսեան, Թիֆլիսի քաղաքապետի պաշտօնակատար Շեքոտայով, Ռուսաստանի ներքին նախանցներից եկած անձինք եւ երկու սեփական պատկանող քաղաքի հիւրեր: Ժողովը բացվումը յետոյ կարգապահին այն հետադիմները, որոնք ստացվել էին դանազան անձներից եւ հիմնարկութիւններից: Առաջինը կարգապետի երկրագործութեան միւսիսոր Շեքոտայովի հետադիմը: Թէ այդ եւ թէ միւս հետադիմների բովանդակութեան մասին տեղեկութիւն կը տանք Մշակիչ հետեւեալ համարում: Հետադիմների ընթացիկից յետոյ սկսեցին շնորհաւորութիւններ անել կովկասեան բժշկական ընկերութեան կողմից բժիշկ Պանտիւրով, Կիեւի գիւղատնտեսական ընկերութեան կողմից կոմս Բէպին, Թիֆլիսի քաղաքի կողմից Շեքոտայով, Տերոկի գիւղատնտեսական ընկերութեան կողմից Տուսկաւով, Պետերբուրգի հիւսիսային գիւղատնտեսական ընկերութեան կողմից Աւետիս Գալանթաւ, շնորհաւորական թղթեր Մշակի, «Մուրճ» եւ «Кавказский Вестник» հրատարակութիւններից: Շնորհաւորութիւններից յետոյ ընկերութեան քարտուղար Իօսելիսանի կարգապետի գիւղացու ընկերութեան սկզբնաւորութեան մասին: Այնուհետեւ Ալ. Գալանթաւ կարգապետի գիւղացու Կովկասի գիւղատնտեսական ընկերութեան արդի դուքսեան մասին: Նիստի վերջում Ե. Մեդվեդեւի գիւղացուներով, որ միմեկորի թղթաւորութեամբ նշանակված են չորս ժողովներ կաթնատնտեսութիւնի, երկրագործութիւնից, անայնազօրութիւնից եւ գիւղագործութիւնից, յայտնեց ժողովները բացված Նիստը վերջացաւ ժամի 9 1/2-ին:

Մեզ խնդրում են հաղորդել, որ ցուցանաղէսի նախալին բաժնուած այս չարաթ՝ ամեն օր լինելու են բացատրութիւններ. կը խօսեն. 1) փորելու եւ հում նաւթի մասին—լեռնային ինժեներ Ն. Ալիբեկեան 2) կերտօրի եւ իւզգիւրի արդիւնաբերութեան մասին—քիմիկոս Անուշ. Գալանթաւ:

Կիրակի, սեպտեմբերի 30-ին, ցերեկվայ ժամի 1-ին, Թիֆլիսի արտառական ընկերութեան շինութեան մէջ տեղի ունեցաւ Կովկասեան բժիշկների 2-րորդ համագողովի բացումը: Համագողովի կօմիտէի նախագահ Բժ. Լուսինկիչ ամենից առաջ առաջարկեց շնորհատուրի հոգակաւոր պրօֆէսոր Բուրդիսի վերստովի ծննդեան 80-ամեայ յօբելանսը, որ նոյն օրը տօնվում էր Բերլինում: Այս առաջարկութիւնը ընդունվեց միաձայն եւ բուն ծափահաս-

- Սէօրաբացայից (Ջաւա կղզի)՝ Չօրբայ, Յովհաննէս Գիւրքեան, Յովակիմեան, Մերոպեան, Նիկարեան, Նահապետեան, Յովակիմ Յօրթանեան, Աղանուր:
- Բաղէից՝ Տիգրանեանց:
- Ռօտովից (Դոնի վրա)՝ ա) խմբագիր Բուսեբէն Պրիւազովի Կրայց թերթի Սերբէ Յարութիւնեան. բ) Թեմիսեան, Գասարեան, գ) Միստա եւ Ռուբէն Բէրբէրեան, Գէորգ Չուբարեան, Ռոստոմ Անուսիան, Յովհաննէս Պալեան, Գրիգոր Ռոստոմեան, Կարապետ Հանսեան, Գրիգոր Սահաթեան, Արամ Շահբուղալեան, Գրիգոր Բէրբէրեան:
- Նոր-Նախիջևանից՝ ա) Չալխուշեան. բ) Չարբեան:
- Ալեքսանդրօպօլից՝ Բէպուրեան:
- Արասթուանից՝ Բժ. Բարայեան, Մելիք-Հայկազեան, Մամիկոնեան, Կանկաճեան, Տէր-Միքէլեան, Միքայելեան, Տարեան, Սորկովա-Կուրբի (?), Դուրխանեան, Տէր-Մարտիրոսեան, Նիկարեան, Գալանթաբեան, Յովհաննէսեան, Գրիգորեան, Արամեան, Կուրալեան, Տէր-Գրիգորեան, Մովսէսեան, Թումանեան, Աւագանեան, Մելիք-Կարազեօղեան, Տէր-Յովհաննէսեան Կարապետ:
- Ախալցխից՝ ա) ոսկերիչներ. բ) Հ. Գաղէզեան:
- Օղեսասայից՝ Գուրգուրեան:
- Սյունեանից՝ Մելիքեանց:
- Սինկափուրից՝ Գալապար:
- Նաղուրից՝ Սաղբեան:

- Ներսիսեանցից՝ Կ. Չիլիս:
- Խարբըրդից՝ Իսրայէլեան Եպիսկոպոս:
- Պրոսպից՝ Չամսեան Եպիսկոպոս:
- Այժմ անցնեց նամակներից:
- Էջմիածնից՝ Մ. Խրիսեան Կաթողիկոս ամենայն Հայոց:
- Թիֆլիսից՝ ա) «Մշակ»-ի խմբագրութիւն. բ) Գալուստ Գալապեան. գ) Աղբիւր եւ Տարաղ-ի խմբագրութիւն:
- Սեւանից՝ Վանայից Սարգիս Եպիսկոպոս:
- Պետերբուրգից՝ Կ. Նիկանց:
- Հին-Նախիջևանից՝ Մերոպ արքեպիսկոպոս Սմբատեանց:
- Ախալքալաքից՝ ՅԵ երկսեռ ստորագրութեամբ մի նամակ:
- Ախալցխից՝ Նիկիչ վարժապետ Մեծատուրեան:
- Մոսկովայից՝ ա) Տիգրան Մակարեան. բ) Գր. Խալաթեանց:
- Շուրավէրից՝ Գր. Բալապեանց:
- Կարսից՝ ա) Հայ կաթօլիկ հասարակութիւն. բ) տիկին Թագուհի եւ Աստուածատուր Բէկ Յովսեփեանց:
- Ատարխանից՝ Յովակիմ Սուրովեան:
- Շահնազարդից (Շիրակ)՝ Սարգիս վ. Եղաբեան:
- Ռօտովից (Դոնի վրա)՝ Միքայէլ Թեմիսեան, Յովհաննէս Պալեան:
- Միսիսեօպօլից՝ Ղազարոս Բժ. Յովսեփեան:
- Հոռովից՝ ա) (պապի կողմից) կարդիւս Թամպուս. բ) Յովհաննէս վ. Միքեան. գ) Պետ-

- րոս վ. Գոյունեան:
- Պարիզից՝ ա) Հայկական մատուռի հոգաբարձութիւն (հայ գաղթականութեան կողմից). բ) Գ. Բաղիշաղեան. գ) Արիական Ընկերութիւն Պարիզի. դ) տիկին Խ. Ներսէսեան. ե) Գ. Մեծատուրեան. զ) Մ. Պաղատապրեան:
- Նոր Զուղայից՝ Տիգրան Արագոնեան:
- Կ. Պոլսից՝ ա) Մ. Արեւեան. բ) Յ. Ռուսեան. գ) Տիգրայր վ. Մարգարեան. դ) Դանիէլ Գ. Չուպուրեանեան. ե) Աւետիս արքեպիսկոպոս Արիփարեան. զ) Միհրան Յովհաննէսեան. է) Կոյս Աղաւնի Ասկերեան. ը) Յ. Արան. թ) Յ. Մեդվեդեան. ժ) Արթ. Չամչեան:
- Ինքննայից՝ ա) Կ. Արսէն Այտրեան. բ) Հ. Առաքելեան:
- Կիպրոսից՝ ա) Վ. Մ. Գիւրքեան. բ) Պետրոս վ. Սարաճեան:
- Ռոմանից՝ Մ. Միքայելեան:
- Դուրբից՝ Խ. Յ. Սարաճեան:
- Հէլսինկից (Ասերիկա)՝ Հայ ընթերցարան:
- Կալաթայից՝ Մեարոպ Մեթեան:
- Ռաշտից՝ Հայուհեաց բարեգործական ընկ.:
- Վենետիկից՝ ա) նախագահ տարրական դպրոցների բարեգործական ընկերութեան՝ Կուստալօ Բուրլիս. բ) Բաղաքապետի ներկայացուցիչ Կաստիլի. գ) Լոյդի ընկերութեան տեսուչ Կոցի. դ) Գաղաքային հիւանդանոցի բժշկապետ Պիետասո դա Վէնէցիա. ե) Կոմս Գրիմանի (քաղաքապետ) զ) Արքայապետ Բենեդիկտեան Միքայելեան. է) Կորբատոս Կամիլլինի: Թիֆլիսից (Սեւ ծով)՝ Միքայել Յ. Գըլը-

- ճեան:
- Չմիւնիայից՝ Յակոբեան:
- Տիգրանակերտից՝ Անդրէաս արքեպիսկոպոս Չէլէպեան:
- Ս. Տօրծից (Շվեյցարիա)՝ Խ. Մալուսեան:
- Աղանայից՝ Պօղոս Եպիսկոպոս Թիֆլիսեան:
- Տրապիզոնից՝ Միքայէլ Ռափայէլեան:
- Մարաշից՝ Վ. Ս. Միքայելեան:
- Մարաշից (Թիւրքիա)՝ Յուսիփ ծ. վ. Կիրիան:
- Մամպուտից (Մարդին)՝ Բարսեղ վ. Գալապեանեան:
- Երզնկայից՝ Կարապետ Տէր-Խաչատուրեան:
- Մանչեսթրից՝ Հայ գաղթականութիւն:
- Բոստոնից (Ասերիկա)՝ խմբ. «Հայրենիք»-ի Ազգայնագրարից՝ ա) Գր. Նիկողոսեան. բ) Նազարէթ Ա. Ալլաւիզըրեան:
- Ֆիլիպից՝ Արամ Սահակեան:
- Յօջանից՝ Յ. Ս. Յէրանտեան:
- Անվերսից՝ Մ. Խրեան:
- Ամասայից՝ Միքայէլ Զան. Մեղունի:
- Յօզուածս չը փակած՝ մի անգամ եւս կոչ կընեն հայ հասարակութեան, որ Միսիսթար Արքաւոր արձանը պատրաստել առիտ համար աշակէջ Վենետիկ Միսիսթարեանների կողմից բացված հանգամանակութեան Միայն թղթի վրա չը լինի մեր համակրութիւնը դէպի Միսիսթարի ազգօրուտ գործը, այլ պէտք է դրական կերպով եւս յայտնենք մեր յարգանքը:
- Կ. Յ. Բաճաւալեան:
- Վ. Ե. Ե. Ե. Ե. Ե.

րութիւններով կ'օժտուի նախապարտաւորական նիւտում հաստատողի նախագահ ընտրված էր զինուորական շրջանային բժշկական տեսուչ Մարիին, որը եւ գրաւելով նախագահական աստիճանը՝ յայտարարեց համաժողովը բացված: Ապա կարգադրեցին կօմիտէի քարտուղարի տեղեկագիրը եւ Ն. Մախարովի զեկուցումը: «Տեղեկագիրները անման հարցի մասին»:

Կիրակի, սեպտեմբերի 30-ին, Դիւզուբէյի Աստուածածնի եկեղեցու մէջ տեղի ունեցաւ վրաց հասարակական գործիչ Քեօրի Քարթվիլի թաղուց, որին ներկայ էր ամբողջ վրաց ինտելիգենցիան, մասնաւոր ներկայացուցիչները, քաղաքագլխի պաշտօնակատարը, ձայնաւորներ եւ այլն: Դառաղի վրա դրված էին պատկերներ՝ Վիլհելմի խմբագրութիւնից, վրաց թատրոնական կօմիտէից, վրաց հրատարակչական ընկերութեան կողմից եւ ուրիշ շատերից: Թաղական ժամանակ խօսակցեցին եւ դամբանականներ:

Կիրակի երեկոյեան, սեպտեմբերի 30-ին, թիֆլիսի ներքինեան դպրոցում, Վեհափառ կաթողիկոսի օժան տարեկարծի ասիթով, տեղի ունեցաւ գրական երեկոյթ, որին ներկայ էին դպրոցի հոգաբարձուները, ուսուցիչները, Այվասեան եպիսկոպոսը եւ մի քանի հոգեւորական անձինք: Երեկոյթը նուիրված էր կաթողիկոսի գրական գործունէութեան, որի վերաբերմամբ ներստեան դպրոցի ուսուցիչ Ստ. Մարտիանան ձառ խօսեց: Այսպէս արեւելիկ կարգադրեցին ոտանաւորներ եւ երգեցին երգեր:

Երեկ, հոկտեմբերի 1-ին, տեղի ունեցաւ կաթողիկոսական ժողովի առաջին նիստը Ար. Քարթվիլի նախագահութեամբ: Այդ նիստերը կը շարունակվեն մի շարքով, իւրաքանչիւր օր, կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում, սկսած ժամի 8-ից: Կարող են մասնակցել նաեւ կողմնակի անձինք:

Թիֆլիսի երդուեալ հաստատարներին եւ նրանց օգնականներին ընդհանուր ժողովում, որ տեղի ունեցաւ կիրակի, սեպտեմբերի 30-ին, ընտրվեց իրաւաբանական խորհրդակցութեան գործադիր մասնաժողով: Մասնաժողովի անդամներ ընտրվեցին երդուեալ հաստատարներ Պրոկոպիւսը, Պրոկոպիւսը, Բարխուդարեան, Խոլոխանեան եւ Իւզարչեան:

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդութիւնը, հրատարակող Պետերբուրգի համալսարանում ստիւդենտական իրաւունքի բացմանց ամբողջ համար պրօֆէսոր նշանակելուց, առաջարկեց իրաւաբանական ֆակուլտետին մրցութիւն նշանակել այդ առարկայից եւ ապա պրօֆէսորի ընտրութիւն անել:

Պետերբուրգի համալսարանի պրօֆէսորները եւ գրականագէտները կողմնակի մի խումբ ձեռնարկում է մի մեծ նրատարակութիւն՝ «Համալսարանական եւ արդի ուսական կեանքը» վերնագրով: Հրատարակութեան արդիւնքը ամբողջովին կը յատկացվի չքաւոր ուսանողներին օգտին:

«Россия» լրագրին հետագրում են Կիւբից, թէ այդ քաղաքի ինտելիգենտ կանաչը դիմեցին Կիւբից համալսարանի ղեկավորին մի միջնորդութեամբ, որով խնդրում են, համալսարանի ղեկավարի ջննութեան ժամանակ, ջննական ծրարով մէջ մտնել եւ կանաչի համալսարանում ընդունելու հարցը, գտնել իրեն ազատ-ուսնիչները փոքրաթիւ ուսանողներունց ֆակուլտետներում: Բէկաւորը մերժեց ընդունել այդ միջնորդութիւնը եւ խորհուրդ տուեց դիմել ուղղակի ժողովրդական լուսաւորութեան միջնորդին:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՍԻՍ մեզ գրում են. «Փաստաւորութիւնային արձանի լուսանկարը պատրաստ է: Առաջին օրինակը Գր. Չախուշեան ուղարկել է Վեհափառ կաթողիկոսին, իսկ երկրորդ օրինակը՝ Վեհափառ Միսիթարեան ուխտին:

ՍԱՄԱՂԱՐ գիւղից (Էլմիսնի գաւառ) մեզ գրում են. «Այս տարւոյ երաշխին, վերջապէս, քանի որ է յարբեց անընդհատ մեզմ անմարտ: Օղը գովապաւ. եղանակները բոլորովին պնդանային են: Արարածի եւ Արագածի գաղթները ծածկվեցին ձիւնով: Աշնանային

ցանքերը սկսվել են: Բամակի բերքը լաւ է: Առաջով թանգութեան նշան մեզանում չը կայ»:

ԼԻՐԻՊԱՅԻՑ մեզ գրում են. «Միսիթարեանները 200-ամեայ յօբելանը արձագանք գտանաւ տեղիս հայ ուսանողութեան մէջ: Մեր օրինակելի միաբանութեան արդիւնաւէտ եւ անխնայ գործունէութիւնը ազգային գրականութեան զարգացման, հայագիտութեան եւ գիտութեան գործում ստիժ տուց ուսանողներին յարգելի ա. Դազարի հայրերին մի ուղերձով, որի բովանդակութիւնը հետեւեալն է: «Ինչպիսի հայ ուսանողութիւնը չնորհաւորում է Ձեր փառաւոր անցեալի 200-ամեայ յօբելանը եւ ամբողջ հոգով մասնակցում է Ձեր տօնախմբութեանը: Թող դեռ շատ շարքեր Միսիթարեան միաբանութիւնը նոյն անդուլթեամբ ծառայէ հայ ազգի լուսաւորութեան գործին, ծաղկեցնէ հայկական գիտութիւնն ու գրականութիւնը, բարձրացնէ հայի անունը Եւրօպայի աչքում եւ ծառայէ միշտ իբրեւ նմանվու աթոնի օրինակ ոչ միայն հայ ալլ եւ ամբողջ աշխարհի հոգեւորականութեան համար: Կեցցէ յաւիտեան հայ ազգի պարծանք Միսիթարեան միաբանութիւնը»:

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՑ**

—Ինչպէս յայտնի է, հոկտեմբերի 3-ին (ն. տ.) վերջացաւ այն ժամանակամիջոցը, որի ընթացքում թոյլ չը արված կրօնական միաբանութիւնները պէտք է դիմէին Ֆրանսիական կառավարութեան եւ Ֆրանսիայում մնալու թոյլատրութեան խնդրէին: Մինչեւ այդ ժամանակամիջոցը բոլոր կրօնական միաբանութիւնների երեք ջանքերը—սոս 590 միաբանութիւններ—գիւղեցի կառավարութեան թոյլատրութեան խնդրագրով: Այդ խնդրագրերի մի մասը կը ներկայացնէին պարլամենտին, իսկ միւս մասը—պետական խորհրդին: Նոյն ժամանակ դատական իշխանութիւնները հարկադրված կը լինեն զբաղվել այն միաբանութիւններով, որոնք հրատարակեցին կառավարի օրէնքի պահանջը եւ թոյլատրութեան խնդրի ներքեց գործերի միջնորդը կուղարկէ այդպիսիների ցանկը արդարադատութեան մինիստրին, իսկ վերջինը նոյն ցանկը կ'ուղարկէ բոլոր գլխաւոր պրօկուրորներին, որոնք եւ պէտք է հոգան օրէնքի գործարութեան մասին: Չը թոյլարված միաբանութիւններին այն անդամները, որոնք ապրում են միասին, կենթարկվեն ուղղիչ օտարկանութեան դատին: Բայց, ըստ երեւոյթին, այդպիսի դէպքեր չեն լինի, որովհետեւ բոլոր կրօնական միաբանութիւնները, որոնք հրատարակեցին թոյլատրութեան խնդրից, ցրվել են արդէն կամ հեռացել Ֆրանսիայից: Այս պատճառով դատական իշխանութիւններին կը վիճակվի սահմանափակվել միայն այն դպրոցներ լիկվիդացիայով, որոնք պատրու են թոյլ չը արված միաբանութիւններին:

—«Daily News» գրել է մի առաջնորդող յօդուած, որով պահանջում է ազատամիտ կուսակցութեան պարագլխի գերը յանձնել Ջոն Մորլէյին: Լրագրի ստեղծի վերջին ժամանակ այդ կուսակցութեան մէջ տիրում է կարծիքների կատարեալ տարաձայնութիւն: Ազատամիտ-իւզմէրիստները, իրանց գլուխ ունենալով Ալեկսիսին, դադարեցին ի նկատ աննի կուսակցութեան պաշտօնական պարագլխի կէմպրէ-Բաննիքսին, կարծիքները եւ իրանց ճառերում այնպիսի յայտարարութիւններ են անում, որոնք համահասարակ են ազատամիտների մեծամասնութեան հետ համերաշխ լինելուց հրատարակելու: Մենք, —ասում է «Daily News», —աստիկ ցաւում ենք այդ դաւանանութեան համար, որի պատճառով ազատամիտ կուսակցութիւնը կորցնում է մի քանի առաջնորդ անձինքի Մենք յոյս ունենք, որ նրանք խելքի կը գան եւ նորից կը միանան ազատամիտ կուսակցութեան հետ: Այսուամենայնիւ ազատամիտ կուսակցութիւնը չէ կարելի թողնել առանց ղեկավարի այն րօպէում, երբ երկիրը առանձնապէս կարիք ունի այդ կուսակցութեան: Ասում են, թէ սէր Հէյրի կենսաբէլ—Բաննիքսն, Վիլեամ Հարիօրս եւ Ջոն Մորլէյ չուտով մի խորհրդակցութիւն պէտք է ունենան իրար հետ իբրեւ գրութեան վերաբերմամբ: Մենք հաւատում ենք, որ այդ լուրը ուղիղ է: Նորադոյն իմպերիալիզմը կարող է աղթանակ միայն ազատամտութեան քայլքայման գնով, իսկ ազատամտութիւնը քայլքայման ճանապարհի վրա չէ: Մեր կարծիքով չը կայ մի մարդ, որ աւելի ընդունակ լինէր վերականգնել կուսակցութիւնը, քան Ջոն Մորլէյ, որ ներկայ ժամանակ միակ խոշոր անձնաւորութիւնն է քաղաքական աշխարհում, որի վրա կարող էր կենսարժանալ ժողովրդի ոգեւորութիւնը, այն ոգեւորութիւնը, որ ստեղծեց Պաղատօսին: Արժէ միայն, որ Ջոն Մորլէյ մի խօսք ասէ եւ հազարաւոր մարդիկ կը գնան նրա ետեւից»:

—«Times» լրագրին հաղորդում են Կ. Պօլսից, որ գերմանական եւ ուսական դեպատնութիւնները մտադիր են դիմել Բ. Դրան եւ քաղաքարկութիւններ պահանջել վերջին դէպքերի առիթով, որոնք տեղի են ունեցել թիւրքիայի հայկական նահանգներում, հիմնվելով իրանց հիւպատոսներին ստացած տեղեկութիւնների վրա: Ինչպէս կ'իշխուի իրանց իշխանութեան տակ գտնվող տեղերում թատրոնական ներկայացումները եւ բոլոր հասարակական գոտարկութիւնները, որպէս զի խոյս տան ժողովրդական համախմբութիւններից:

առիթով, որոնք տեղի են ունեցել թիւրքիայի հայկական նահանգներում, հիմնվելով իրանց հիւպատոսներին ստացած տեղեկութիւնների վրա: Ինչպէս կ'իշխուի իրանց իշխանութեան տակ գտնվող տեղերում թատրոնական ներկայացումները եւ բոլոր հասարակական գոտարկութիւնները, որպէս զի խոյս տան ժողովրդական համախմբութիւններից:

**ՄՇԱԿԻ ՀԵՌՈՒԳԻՐՆԵՐ**

**ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ**

29 սեպտեմբերի  
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Սեպտեմբերի 29-ին Մուրզի գիւղում կատարվեց թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի Մարիինայի հոգաբարձութեան տակ գտնվող խուլ եւ համերբի նոր չինութեան հիմնարկութիւնը:

ՄԻՒՄԱ: Խաբիբուլլա Հնդկաստանի փոխարքային մի նամակ ուղարկեց, որով տեղեկացնում է Էմիրի մահվան մասին, որ տեղի է ունեցել սեպտեմբերի 20-ին եւ աւելացնում է, որ եղբայրները, զօրքերի գլխաւոր հրամանատարները եւ զօրքը նոյն օրն եւ եթ նրան էմիր հրատարակեցին հրապարակական ժողովում եւ հաւատարմութեան երդում տուեցին նրան: Խաբիբուլլա ապա յայտնում է, թէ զինուորութիւն ունի հօր չաղով ընթանալ եւ յոյս է յայտնում, որ բարեկամական յարաբերութիւնները երկու կառավարութիւնների մէջ աւելի եւս կ'ամրապնդվեն:

ԲԵՐԼԻՆ: Առաւօտեան լրագրից երբ լուստեան Վիրթովի 30-ամեակին նուիրված շոքաւորական յօդուածներով «Klinische Wochenschrift» տպեց օտնական հրատարակութիւն, որի մէջ ամբողջ աշխարհի ամենանշանաւոր գիտնականները բժշկականութեան շրջանում գովաբանում են Վիրթովի ծառայութիւնները այդ շրջանում: Նրանցից մի քանիստերի յօդուածները գրված են նրանց մայրենի լեզուներով: Առաջին տեղի է բռնում պրօֆէսոր Բալլիսթրի լատիներէն ձօնը: Ուրիշ երկիրների ներկայացուցիչներից արդէն Բելլիւն են եկել յօդու կառեր եւ լատինագրօք Սելլու Անգլիայից, պրօֆէսոր Կորնիլ—Պարիզից, Պոլիս—Հոլանդիայից, Տօյա—Վիէնայից, Եմմիսկու—Բուխարէստից, Բիւմէնաւ—Մոսկուայից, Պօլիսոցի—Օղէսայից եւ բժշկական աշխարհի շատ ուրիշ նշանաւոր գործիչներ:

ՊՐԱԳԱ: Սէյմի ընտրութիւնները ֆազաքային համայնքների կողմից ընտրվեցին 35 երիտասարդ չէխեր, 10 գերմանական պրօգրէսիստներ, գերմանական ժողովրդական կուսակցութեան 7 անդամներ եւ 10 պանգերմանիստներ: Ընտրված են էլի մի հին չէխ, սերը եւ երկու չէխ-արմատականներ: Ընտրութիւնների հետեւեալը Բուդէշտատում դեռ յայտնի չէ: Կրկին հինգ ընտրութիւններ են լինու: Մինչեւ այժմ երիտասարդ չէխերը ձեռք բերեցին 39, պրօգրէսիստները—20, ժողովրդականները—8 եւ պանգերմանիստները—7 տեղեր:

ՄԻՒՆԻՐՈՒՐԳ: Բօքարական հրամանատար Մոտից յայտարար Եմմիսկուի դատաւարական ժողովի պատժի եւ կիսչէնի հաստատեց դատաւիճար, Լոտտէրի գորաբաժնի պատկանող հինգ ուրիշներն եւս մահվան պատժի դատաւարակցեցին, բայց մահվան պատժը փոխարինվեց մշտական բանտարկութեամբ:

ԿՈՂԵՆԱՒԵՆ: Լանդտիւնից ընդունեց կառավարութեան առաջարկութիւնը քաղաքային նոր փոխառութեան վերաբերմամբ այն բանից յետոյ, երբ ի նպատակ այդ փոխառութեան խօսեցին բոլոր կուսակցութիւնների հեռաօրները: Դրանով ապահովված է կառավարչական նախագիծ անյապիջ կ'ընդգործուի:

ՄԻՒՆԻՐՈՒՐԳ: (Կապի գաղթականութիւն): Լոտտէր մահվան պատժի է ենթարկված այսօր առաւօտ:

ԼՕՆԻՕՆ: Կիւպիներ հաղորդում է, որ հրամանատար Շեպէրս գերի է ընկել գնդերալ Ֆրենչի գորաբաժնի ձեռքը:

ԲԵՐԼԻՆ: Վիրթովի հանդիսարար օտնախմբութիւնը սկսվեց նոր կառուցված պաթօլօգիական ինստիտուտում: Հանդիսին մասնակցեցին օտար հիւրերը, Բերլինի ամբողջ բժշկական ֆակուլտետը, գերմանական համալսարանների պատգամաւորութիւնները, պետական քարտուղար Պատալօպի, Բիխտօֆէն, պրոսական միջնորդներ Շտուգա, Տելլէն եւ Միլլեր, ընդհանուր շտաբի բժիշկ Լէյպզոլդ եւ օտար համալսարանների շատ պրօֆէսորներ: Վիրթով, որին ընդունեցին երկար, անընդհատ ձափառարկութիւններով, ճառ արտասանեց, որ համարեա երկու ժամ շարունակվեց: Այդ ճառը

ով մէջ նա նկարագրեց պաթօլօգիական ինստիտուտի զարգացման պատկերը եւ, մասնաւոր յոյս անելով գերմանական հետազոտութիւնների վրա, յիշեց Բօլսի համալսարանի, մասնաւոր պրօֆէսոր Բալլիսթրի աչքի ընկնող ծառայութիւնները: Պիլսուր բժիշկ Շէպէրս գրանից յետոյ բերեց commundis mundi praeceptor սրտագին շնորհաւորութիւն եւ բարեմաղթութիւններ, եւ մի եւ նոյն ժամանակ սակ սակ, թէ Վիրթովի մշտական սկզբունքն էլ է suprema lex salus publica.

**30 սեպտեմբերի**

Միջնորդների կօմիտէի նախագահ պետական-քարտուղար Դուրնօլօ, արձակուրդից վերադառնալով, ստանձնեց միջնորդների կօմիտէի նախագահի պաշտօնը:

ՄԻՒՄԱ: Կարուլից ստացված տեղեկութիւնների համեմատ, այնտեղ ամեն ինչ հանգիստ է: Առանձին ցեղերի հրամանատարները ուղեւորվում են Քարուլ քաղաքում սալու էմիր Խաբիբուլլային:

ԲԵՐԼԻՆ: Պատգամաւորների ժողովի մէջ ի պատիւ Վիրթովի կազմած հանդէսը փառաւոր անցաւ, Պատալօպի եւ Շտուգաի պատաւար նախագահութեամբ եւ օտարերկրայ ներկայացուցիչների ներկայութեամբ: Պրօֆէսոր Վալդէյէր ողբունեց Վիրթովին եւ յանձնեց նրան Գերմանիայի պատաւար պարգևը, 50,000 մարկ: Վիրթովի անուան հիմնարկութեան միջոցները աւելացնելու համար, Դրանից յետոյ ժողովրդական լուսաւորութեան միջնորդ Շտուգա հաղորդեց, որ կայսրը շնորհեց յօբելանին մեծ ոսկէ մեդալ, որ արվում է գիտութեան ներկայացուցիչներին, եւ կարգաւ քարծրագոյն նամակ:

ԲԵՐԼԻՆ: Թանուհ Վիրթովի գրած նամակում կայսրը խօսում է նրա գիտական հետազոտութիւնների մասին, որոնք նոր ճանապարհներ են հարթել դէպի գիտութիւնը, եւ աւելացնում է, որ, չնորհիւ այդ առաջատանքների, Վիրթովի անունը պայծառ առաքելով առ միշտ արձանագրված կը մնայ բժշկականութեան պատմութեան էջերում եւ յարգված Գերմանիայի սահմաններից դուրս: Նամակի վերջում կայսրը հաղորդում է, որ շնորհում է Վիրթովին մեծ ոսկէ մեդալ ազիտութեան համար:

Պատգամաւորների ժողովի մէջ կէսօրից յետոյ կայացաւ բանկէտ ի պատիւ Վիրթովի: մասնակցողների թւում կային Պատալօպի, Շտուգա, գլխաւոր գիտնորական բժիշկ Լէյպզօլդ, ուրիշ երկիրների ներկայացուցիչները, որոնց թւում Բալլիսթր, Լիստեր եւ Կորնիլ Բանկէտից յետոյ կայացաւ մեծ հանդիսարար ակապատգամաւորների ժողովի դահլիճում: Դահլիճը զարդարված եւ լցված էր հասարակութեամբ:

ՊԱՐԻՉ: Դարբա, Մուրլան, Մէգիլ եւ ծովապետ Պիւշ նշանակված են պատաւար լեզիօնի շքանշանի խորհրդի անդամներ:

Պարլամենտը կը բացվի հոկտեմբերի 9-ին: Կառավարութիւնը կը պահանջէ պատգամաւորների ժողովից, որպէս զի բիւջէտի հետ միաժամանակ զննութեան ենթարկվեն շաքարի արտահանական պրէմիաների հարցը եւ պրէմիաների վերաբերեալ նախագծերը առեւտրական նաւատորմի համար:

Կ. ՊՕԼԻՍ: Բ. Դուրը գիւղեց չէրնօգորիական դեպուսին եւ զանազան յայտեց այն առիթով, որ չէրնօգորցիները, առանց որ եւ պատճառի, խախտեցին սահմանը, յարձակվելով Նօյօե Սիւօ գիւղի վրա, եւ միջոցներ պահանջեց սահմանի այդ տեսակ խախտման առաջն աննելու համար: Ֆրանսիական հաստատարաւորը հրամանագիր ստացաւ ճնշում գործ դնելու թիւրքիայի վրա՝ պատաճի անյապիջ կ'ընդգործուի: համար Լօրանդօր գործի վերաբերմամբ:

ԿԱՊԵՏԱՎԻՏ: Մահվան պատիժը, որին դատաւարված էր մի ազգարակատէր Բարկլիվէտում, փոխարինված է ստանաւային հարկադրական աշխատանքներով: մէկ ուրիշ ազգարակատէրի համար Եմկօրաշտում մահվան պատիժը փոխարինված է քստորով: նախկին ֆէլդօրնէտը Ֆրէյբուրգում դատաւարակաւ չէր ստանաւային բանտարկութեան, բայց այդ պատիժը պակասեցրված է մինչեւ երեք տարի: մահվան պատիժը մի ֆերմէրի համար Ֆրէյբուրգում փոխարինված է մշտական ստիպողական աշխատանքներով: Թշնամու կողմը երկու անգամ անցած երկու ազգարակատէրը դատաւարակաւ են Ֆրէյբուրգում մահվան պատիժի կախաղանի միջոցով: Վօրչէտուում մի ազգարակատէր դատաւարակաւ է 100 Ֆունտ սաէրլինգ առկանք կամ 9 ամսվայ ընտարակութեան այն բանի համար, որ նրա

ազարակում ուստի պաշարներ գտնվեցին...

ԼՕՆԻՕՆ: «Times» լրագրի տեղեկություններ...

Պեկին: Չինական լրագրերը յանձնեցին...

ԱՍԽԱՐԱԿ: Սեպտեմբերի 29-ին գինուորական...

ՄՕՍԿՎԱ: Այսօր այտուցի գիտական ընկերությունները...

ՕԴԵՍՍԱ: Տեղական բժշկական ընկերությունները...

ԿԻԻՎ: Համայնքապետության անդամները...

ՊԻՏԵՐԲ: Սեպտեմբերի 2-ից յետոյ գերի են...

ՏՈՒԼՕՆ: Կոմս Դելավո երէկ, երեկոյան ժամի...

ՍՍՍՐՍԿ: Մոսկովի ֆրանսիական փոխհիւպատոսը...

ՄԱՐԱԳԵՐ: ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱՆԱԹԱՐ Հրատարակչներ...

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՏԱՄՄԱՐՈՅԹ Օր. Մարենիկ

ԹԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆՆԵՐԻՆ Առևտրական ժամը 9-2

ՅՈՎԱԿԻՄ ՄԵԼՈՒՄԵՆՑԻ ԲԱՂԴԱԴԻ ԹԵՐԱՍԻ ՍԵՐՄ ՊԱՏՐԱՍԱՄ ՊԱՏԵՐՈՐ ՍԻՍՅՄՈՎ

ՍՍՍՐՍԿ: Մոսկովի ֆրանսիական փոխհիւպատոսը...

ՍՍՍՐՍԿ: Մոսկովի ֆրանսիական փոխհիւպատոսը...

ՎՐԱՑ ԱԶՆԻԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ Չորեքշաբթի, հոկտեմբերի 3-ին...

ԿԱՌԱՊԱՆ ՀԵՆՇԷԼ Դրամա 5 արար. հեղ. Հուսեպանանի, թարգ. Զ. Արէլեանի

ԳԱՄԱՌ-ԲԱՍԻՊԱՅԻ մեղալիծները (МЕДАЛЬОНИ) արցրից նորը...

ՎՏԱԿ Հոյ Է տեսել եւ ծախվում է արդէն

Ֆրական-բանասիրական ժողովածու նուրբում

Թիֆլիսի ֆաղաքային ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ նորիկ աշակերտների ընդունելություն...

Մամուլի տակից դուրս եւ վաճառվում է Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում

ՎԵՄՈՒՍ Վեպի երկրորդ տպագրությունը 9 1 ր. Նոյն գրատանը...

ՆԵՐԱԶԱՓ-ԻՆՓԵՆԵՐ Ս. ԲԱՆԱԹՐԵԱՆ Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական...

ՍՍՍՐՍԿ: Մոսկովի ֆրանսիական փոխհիւպատոսը...

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒԱՆԴԱՆՑ Բ. ՆԱԿԱՍԱՐԳԵԱՆԻ (Կուկիա, Վրոնցովի արձանի հանդէպ)

Բ. Ա. Նուստարեան-11-12 ժ. վրարուծութան...

Մ. Ն. Տպակովսկի-6-7 ժ. ներազային (հեղ. արարող), վերն. և մերթու 4.

Բ. Ա. Նուստարեան-7 1/2-8 ժ. Վճար 50 կ. չքաղցրեր ձրի համախորհրդի...

Հրատարակչի վրաստանը Բժշկական ԿԱՆԱՍԱՐԳԵԱՆ

Հարապահուրեան եւ գրասենականային տեղեկութիւնների Կուրսեր

Պորձնական դասեր ԳԵՐՄԱՆՆԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ Հասակաւորների Համար

Ի. ԵԱ. ԲՐՕՆ-ՖՕՆ-ԲՐԷՆԵՐԻ ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՑ

Նիկոլայեվսկայա, № 88. Խնդիրներ ընդունելություն սկսվում է...

ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԵՒ ԴԱՍԱՏՈՒԱՆՁԻՆՔ 1) Հաշվապահություն

ՍՍՍՐՍԿ: Մոսկովի ֆրանսիական փոխհիւպատոսը...

ՄԵՍԵՂԻՏ ՄԵՍԱՐԺՍՏՈՒՅԻ Ա.ՂԱԻՆԻ ՍԻՐՈՒՆԵԱՆ Բժիշկների ցուցումով մասսամի սեանսներ է...

ՄԻ ՀԱՅՈՒՅԻ Եր գիտէ հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն...

Ատամի եւ ընթանի խոսուցի հիւանդութիւնների ԲԺԻՇԿ Ն. ԿԱՂԱՃԵԱՆ

Վերադարձու եւ ընդունում է հիւանդներին Երևանեան հրապարակ, տունը Խարազեանի

Հարապահուրեան եւ գրասենականային տեղեկութիւնների Կուրսեր

Պորձնական դասեր ԳԵՐՄԱՆՆԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ Հասակաւորների Համար

Ի. ԵԱ. ԲՐՕՆ-ՖՕՆ-ԲՐԷՆԵՐԻ ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՑ

Նիկոլայեվսկայա, № 88. Խնդիրներ ընդունելություն սկսվում է...

ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԵՒ ԴԱՍԱՏՈՒԱՆՁԻՆՔ 1) Հաշվապահություն

ՍՍՍՐՍԿ: Մոսկովի ֆրանսիական փոխհիւպատոսը...



Կօմֆետի եւ Եօկօլադի գործարան „Փ. Ն. ՓՐԻՊՈՆԵԱՆ“ ԹԻՖԼԻՍՈՒՄ Առաջարկում է թարմ կարամէլ մրգեղէնից...